

**Արմինե Մարկոսյան
Եկատերինա Ֆոմինա**

*ԵՊՀ, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն,
Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում մագիստրոսական ծրագիր*

ՋՐԱՌԱՏՆ ԱՆԱՊԱՏ Է

Համառոտ շարադրանք

Սույն վերնագիրը Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի բնակիչներից մեկի մեկնաբանությունն է համայնքի ոռոգման ջրի խնդրի վերաբերյալ: Արդեն տասը տարի Արարատյան դաշտի այս փոքր համայնքի բնակչությունը գրկված է ոռոգման ջրից: Արարատյան դաշտում ձկնային տնտեսությունների հիմնումը վերջին 15 տարիների ընթացքում հանգեցրել է Արարատյան դաշտի անապատացման ու սոցիալական իրավիճակի վատթարացման: Ջրային պաշարների գերշահարգործման արդյունքում խորքային հորերի ջրատվությունը պակասել է, ստորգետնյա ջրերի հորիզոններն իջել են, ջրի հանքայնացումը բարձրացել է: Հողերը ենթարկվել են անապատացման, ինչպես նաև՝ որոշ տեղերում գերխոնավացման, աղակալման, ճահճացման, էլեկտրականության ծախսն աճել է պոմպերի օգտագործման արդյունքում: Այս խնդիրն առկա է Արարատյան դաշտի գրեթե 30 համայնքներում: Արմավիրի մարզի գյուղերի գրեթե 52%-ը կամ գրկված է ջրից կամ էլ սահմանափակ քանակի պաշարներ ունի:

Արմավիրի մարզի Ջրառատ գյուղը ընտրվել է որպես ակնհայտ օրինակ մի վայրի, որն անցյալում ջրի հարուստ պաշար է ունեցել: Ինչպես գյուղի բնակիչներից մեկը՝ Լեռնիկն է ասում.

-Ջրառատում մի փոքր լճակ կար, որը «Փոքր Սևան» էինք կոչում: Այն մարդկանց ապահովում էր ոռոգման ջրով: Հիշում եմ՝ երեխա ժամանակ ընկերներիս հետ խաղում էինք լճի տարածքում: Հիմա այն գրեթե անապատ է:



Ջրառատի գլխավոր ջրամբարն այսօր. Լուսանկարը՝ Ե. Ֆոմինայի

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Ջրառատում ոռոգման ջրի պաշարների սղության պատճառը: Խմբի նպատակն է ցույց տալ այս գործոնի ազդեցությունը մարդկանց կյանքի այլ ոլորտների վրա՝ ներառյալ սոցիալական ու տնտեսական հետևանքները: Նախնական տեղեկատվությունը խումբը ստացել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ից:

Քանի որ խնդրի մասշտաբը պարզ չէր, խումբը չէր կարող ավանդական մեթոդով բացահայտել հավանական տուժած կողմերին: Բացի այդ՝ այն փաստը, որ հայաստանյան գյուղերում ապրուստի հիմնական միջոցը գյուղատնտեսությունն է, մասնավորապես՝ հողագործությունը, գյուղի ամբողջ բնակչությանը դարձնում է հավանական տուժած: Թեև սկզբնապես որոշվել էր տուժածներին հայտնաբերել տեղական ինքնակառավարման մարմնի միջոցով, վերջում խումբն անցավ «ձնագնդի» մեթոդին: Գյուղացիները ուղարկում էին այն տները, որի տերերն առավելագույնս են տուժել ջրի պակասից:

Հետազոտությունը հանգեցրել է խնդրի վերաբերյալ մի շարք կարևոր եզրահանգումների.

1. Ջրային պաշարների սակավություն

Առկա ոռոգման համակարգը, որը գյուղը ժառանգել է խորհրդային ժամանակներից, ի վիճակի է ապահովելու ոռոգում ընդամենը 27հա հողի

համար՝ ընդհանուր 450-ից: Մնացած մասը կարող է ոռոգվել բենզին կամ էլեկտրական հոսանք կիրառելով, որը թանկ է գյուղացիների համար:

2. Սոցիալ-տնտեսական խնդիրներ

Ոռոգման բացակայության պայմաններում Ջրառատի բնակչության մեծամասնությունը մնում է գործազուրկ: Արդյունքում՝ շատ մարդիկ թողնում են երկիրը՝ լավ կյանքի փնտրտությամբ: Սա վտանգավոր փաստ է ժողովրդագրության տեսանկյունից: Եթե խնդիրը շարունակվի անտեսվել, մի քանի տարուց ոչ միայն հողը, այլև ամբողջ գյուղը կանապատանա:

3. Բնապահպանական խնդիրներ

Համայնքի երբեմնի մշակելի հողն այժմ անապատացման գործընթացի մեջ է, որը նվազեցնում է դրա արդյունավետությունը անգամ մոտ ապագայում խնդիրը լուծելու դեպքում:

ՀՀ իշխանությունը պետք է ուշադրություն դարձնի այս խնդրին, քանի որ այն կենսական նշանակություն ունի ոչ միայն մեկ գյուղի, այլև ամբողջ հանրապետության համար: Զեկույցն ուղղված է ՀՀ Բնապահպանության և Տարածքային կառավարման և զարգացման նախարարություններին: Առաջինը պատասխանատու է ջրի բաշխման ու էկոլոգիայի համար, իսկ երկրորդը գյուղերի կայուն զարգացման պատասխանատու մարմինն է: Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տարեկան ծրագրերը ամեն մարզի համար սահմանում են զարգացման հիմնական ուղղությունները: Արմավիրի մարզի համար այդ ուղղությունը գյուղատնտեսությունն է, որը ջրի նման սղության պայմաններում դառնում է անհնարին:¹

Ընդհանուր առմամբ՝ այս զեկույցը քայլ է հասկանալու Ջրառատում ջրի սղության պատճառը: Թեև ուսումնասիրության առարկան մեկ գյուղ է, խնդիրը ներկայացուցչական բնույթ ունի, քանզի տարբեր լրատվամիջոցների ու ՀԿ-ների զեկույցները ցույց են տալիս, որ նույն խնդիրը առկա է Արարատյան դաշտի շատ գյուղերում: Այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես է բնապահպանական խնդիրը՝ ջրի պակասը, ազդում մարդկանց կյանքի վրա ու

¹ <http://armavir.mtad.am/files/docs/32175.pdf>

տարածվում մարդկային գործունեության այլ ոլորտներ՝ ազդելով կյանքի որակի և մարդու իրավունքները վայելելու վրա: Ջրի իրավունքը հիմնականներից է, որն ազդում է կյանքի որակի, տնտեսական ու սոցիալական պայմանների վրա: Ջրառատում ջրի պակասը հանգեցրել է տնտեսական, ֆինասական դժվարությունների ու բնակչության տեղաշարժի դեպի արտերկիր:

Հաշվի առնելով միջազգային ու տեղական պարտավորությունները՝ ՀՀ-ն պետք է վերանայի ջրի կառավարման քաղաքականությունը: Նախապատվություն պետք է տրվի խմելու ու ոռոգման ջրի հավասար բաշխմանը՝ հաշվի առնելով ջրի տնտեսական ու բնապահպանական արժեքը, հարկավոր է նվազեցնել ջրի կորուստները ու կանխել ապագա հնարավոր աղետները: Անհրաժեշտ են կոնկրետ օրենքներ ու կանոններ այս հարցում: Ջրային կոմիտեն պետք է փոխի որոշումներ կայացնելու քաղաքականությունը. այդ գործընթացը պետք է թափանցիկ լինի բնակչության համար, քանզի հետագայում դրա հետևանքները հենց նրանք են կրում:



Երբեմնի ջրառատ գետի մնացորդները.. Լուսանկարը՝ Ե. Ֆուխնայի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնապես նախատեսված էր ուսումնասիրել ոռոգման ջրի խնդիրը Արմավիր մարզի երեք գյուղերում՝ Տարոնիկ, Գայ և Ջրառատ, քանի որ մամուլում հենց այս գյուղերի իրավիճակն էր հատկապես ծանր գնահատվում: Այուսամենայնիվ,

ժամանակի ու ռեսուրսների սղության պատճառով միայն մեկ գյուղ ընտրվեց՝ Ջրառատը՝ հաշվի առնելով դրա անվան խորհրդանշական բնույթը:

Խումբը համագործակցել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի հետ, որը նախնական տեղեկություն է տվել Արարատյան դաշտի ու Արմավիրի գյուղերի մասին: Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որը Ջրառատում ձկնաբուծարաններն ընդհանրապես վերացել են ջրի սակավության պատճառով: Անցյալում այդ ձկնային տնտեսությունները ինչ-որ կերպ անգամ օժանդակել են ոռոգմանը, քանի որ դրանց հետադարձ ջրերն են օգտագործվել: Ըստ բնակիչների՝ ջրի պակասի պատճառը Արարատի մարզում առկա ձկնային տնտեսություններն են: Արարատն ավելի ցածր դիրք ունի Արմավիրի նկատմամբ, ուստի Արմավիրից դեպի Արարատ գնացող ու ձկնային տնտեսություններին մատակարարող ջուրն այլևս ընդունակ չի եղել հետ դառնալու:

Քանի որ ուսումնասիրության օբյեկտը փոքր գյուղ էր, որի բնակիչները ճանաչում են միմյանց, խումբը ռիսկեր էր տեսնում հարցվողների հանդեպ հետազայում համայնքապետարանի կողմից անհավասար վերաբերմունքի առումով, ինչպես նաև համայնքում միմյանց հետ հարաբերությունների: Տուժածները կարող էին մեղադրել տեղական ինքնակառավարման մարմնին ու արդյունքում խնդիրներ ունենալ: Հնարավոր ռիսկերը նվազեցնելու նպատակով որոշվեց գաղտնի պահել հարցազրույց տվածների անունները, եթե նրանք այդպես կկամենան: Սակայն աշխատանքը ցույց տվեց, որ անգամ գյուղապետարանն է բարձրացնում այդ խնդիրը, քանի որ այն վաղուց դադարել է տեղական խնդիր լինելուց ու կարող է լուծվել միայն կառավարության մակարդակով: Հետևաբար, բոլորը օգտվեցին ընձեռնված հնարավորությունից՝ բարձրացնելու գյուղում առկա խնդիրը:



Ջրատառի գյուղապետարանը, Լուսանկարը՝ Ե. Ֆոմինայի

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏ

Արմավիրի մարզի աշխարհագրական դիրքն ու կլիմայական պայմանները բարենպաստ են հողագործությամբ զբաղվելու համար: Մարզն ապահովում է ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի 15%-ը: Տարիներ շարունակ Արմավիրի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է եղել: Սակայն վերջին տասը տարիներին Արմավիրի գյուղերը, այդ թվում՝ Ջրատառը, ունեն ջրի պակաս: Քաղաքացիների կայուն զարգացման, բնական ռեսուրսներից օգտվելու իրավունքը՝ սահմանված ՀՀ Սահմանադրությամբ (Հոդված 12.1) խախտվում է, քանի որ չկա գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու ջուր:

ՀՀ Բնապահպանության նախարարությունը փաստացի ընդունել է այն փաստը, որ ձկնային տնտեսությունները գերշահագործել են ջրային պաշարները: Իրավիճակը բարելավելու ուղղությամբ որոշակի աշխատանք է արվում: Սակայն, դեռևս չկա ակնհայտ արդյունք, իսկ մարդիկ շարունակում են մնալ առանց ոռոգման ջրի: Դրա բացակայությունն արդեն իսկ թողնում է իր ազդեցությունը՝ մարդիկ արտագաղթում են:

Խնդրի արմատները գալիս են Արարատի մարզում գտնվող ձկնային տնտեսություններից, որոնք օգտագործել են Արարատյան արտեզյան ավազանի ջուրը: Դրանց շահագործման արդյունքում Արարատյան արտեզյան ավազանի էկոլոգիական հավասարակշռությունը խախտվել է, ջրային պաշարները նվազել են, ջրի որակը վատացել է, ակտիվացել են անպատասցան գործընթացները: Բնապահպանական շատ ՀԿ-ներ ու մամուլը անդրադարձել են Արմավիրի մարզի տարբեր գյուղերի միևնույն խնդրին: Անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունն անհապաղ քայլեր ձեռնարկի խնդրի կարգավորման ուղղությամբ:



Աշխատանքային միգրացիայի արդյունքում աստիճանաբար լքվող տները. Լուսանկարը՝ Ե. Ֆուխնայի

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Փաստագրական ուսումնասիրության, տուժած կողմերի ու ոլորտի մասնագետների հետ հարցազրույցների արդյունքում խումբը վեր է հանել մի շարք գործոններ, որոնք ապացուցում են Ջրառատում ոռոգման ջրի պակասը:

Ջրի հասանելիություն

Ջրառատում հարցված գյուղացիները պնդում են, որ ոռոգման ջրի խնդիրն իրենց գյուղում առկա է արդեն տասը տարուց ավելի: Ոռոգման կենտրոնական համակարգը ի վիճակի է ոռոգելու գյուղի 450հա հողատարածքից ընդամենը 27-ը: Այդ 27հա-ն էլ համակարգի մոտ գտնվող տարածքն է: Հողի մնացած մասի ոռոգումը

չափազանց թանկ հաճույք է: Փաստորեն, ջուրը հասանելի է միայն վերոնշյալ 27 հա հողատարածքի տերերի համար:

Գյուղը, որտեղ ամբողջ կյանքս եմ անցկացրել, հիմա անապատ է դարձել:

—Աննա Մանուկյան, գյուղի ավագանու անդամ

Սոցիալ-տնտեսական խնդիրներ

1. Գործազրկություն

Գյուղացիների մեծամասնության համար ապրուստի միջոցը հողն է: Այժմ, երբ այն մշակելն անհնար է դարձել, մարդիկ այլընտրանք են փնտրում: Լեռնիկը՝ բնիկ ջրառատցի, որն այժմ Երևանում է բնակվում ու երբեմն գյուղ այցելում ծնողներին օգնելու, ասում է.

Այստեղ մարդիկ աշխատասեր են, իսկապես ուզում են աշխատել, բայց դրա հնարավորությունը չկա: Այդ պատճառով էլ գնում են Ռուսաստան կամ այլ երկիր աշխատանք փնտրելու:

ՀՀ Վիճակագրական կոմիտեի 2011 թվականի պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ Ջրառատի բնակչության թիվը կազմել է 2994 մարդ:² Այժմ այդ թիվը նվազել է, թեև դեռևս չկա պաշտոնական հրապարակում. տղամարդկանց մեծամասնությունն արտասահմանում է, իսկ երիտասարդները մեկնում են մայրաքաղաք սովորելու ու վերջիվերջո այնտեղ էլ մնում:

Մեկ այլ բնակիչ՝ Ռոզան, կիսվեց իր ընտանիքի պատմությամբ. հինգ կամ վեց տարի առաջ իրենք այգեգործությամբ տուն էին պահում: Հիմա ամուսինը ստիպված է վարորդ աշխատել, իսկ ինքը գործազուրկ է: Ընտանիքի եկամուտը կտրուկ նվազել է: «Հողը գյուղացիների հացն է»:

² <https://www.armstat.am/file/doc/99486683.pdf>



Ռոզայի սկեսուրը պատմում է Ջրառատի անցյալից. Լուսանկարը՝ Ե. Ֆոմինայի

Մեկ այլ բնակիչ՝ միայնակ ապրող մի տատիկ պատմեց, որ տարիներ առաջ իր ընտանիքը այգեգործությամբ էր ապրում, իսկ հիմա նրանք Ռուսաստանում են, որտեղից իրեն էլ են գումար ուղարկում ապրուստի համար:



Լուսանկարը՝ Ե. Ֆոմինայի

2. Զուրը ստանալու համար հավելյալ ծախսեր

Ընդերքի ջրի մակարդակի նվազումը նոր խնդիր է առաջացրել: Ներկայումս դժվարություններ կան խմելու ջրի ու տնամերձ փոքրիկ այգիները ջրելու հետ կապված: Գյուղացիները պիտի պոմպեր տեղադրեն տնամերձ հողատարածքներում՝ ընդերքից ջուրը դուրս բերելու համար: Այն պահանջում է էլեկտրականության ծախս: Արդյունքում ամեն տուն ամսական մոտ 15.000 դրամ է ծախսում այգիները ոռոգելու համար՝ չհաշված պոմպերը տեղադրելու ծախսերը:

Իշխանությունների անտարբերություն

Համայնքի ղեկավարները, ինչպես նաև մարզպետները բազմիցս խոստացել են լուծել խնդիրը, սակայն ինչպես գյուղացիներից մեկն է ասում, դրանք ընդամենը «նախընտրական խոստումներ» են եղել:

74-ամյա Անդրանիկ պապը հազիվ է զսպում արցունքները գյուղի վիճակի մասին զրուցելիս.

Կառավարություն չկա, գյուղապետ չկա.ոչ մեկի պետքն էլ չէ: Նրանք մենակ ուզում են, որ հարկերը վճարենք:

Անդրանիկը գյուղի այն մեծաթիվ մարդկանցից է, որոնք արդեն չեն հավատում, որ ոռոգման ջրի հարցը երբևէ կլուծվի:

Բնապահպանական

Ինգա Զարաֆյանը՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի ղեկավարը, անհանգստացած է ստեղծված իրավիճակից: Արարատյան դաշտում մոտ 400 հազար գյուղացի կանգնած է գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու հնարավորության կորստի փաստի առաջ, ինչն էլ ոչ միայն կառաջացնի սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ, այլ նաև կնպաստի արտագաղթին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկություններ ՀՀ կառավարությանը

- Կատարել անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներ՝ ջրի համաչափ բաշխման համար՝ միաժամանակ երաշխավորելով Արարատյան արտեզյան ավազանի էկոլոգիական հավասարակշռությունը:
- Փոխել պետական դիրքորոշումը ՄԱԿ-ի ԳԱ-ի 64/292 որոշման հանդեպ, որը ճանաչում է ջրի հանդեպ իրավունքն ու ճանաչում մաքուր ջրի դերը մարդու մյուս իրավունքների իրագործման հարցում: 2010թ. ՀՀ-ն ձեռնպահ է մնացել այս հարցում: Այժմ ժամանակն է փոփոխություն անելու:³
- Բնապահպանության նախարարության հետ մշակել համայնքի հողատարածքի վերականգնման քաղաքականություն՝ հաշվի առնելով բնակիչների կարծիքը:
- Ֆինանսավորում հատկացնել Ջրառատի ոռոգման հին համակարգը վերանորոգելու համար:

Տարածքային կառավարման նախարարությանը

- Ոռոգման նոր համակարգ հիմնելու միջոցներ հատկացնել, աջակցել ու խրախուսել տեղացիներին, որ զբաղվեն հողագործությամբ: Պայմաններ ստեղծել նրանց մթերքը հայաստանյան շուկայում իրացնելու համար:

Դռնոր կազմակերպություններին

- Տեխնիկական օգնություն տրամադրել Ջրառատում ջրի աղտոտվածությունը չափելու համար: Աջակցել տեղացիներին ոռոգման նոր համակարգ կառուցման հարցում:
- Ֆինանսավորել և հրավիրել միջազգային փորձագետների, որոնք կօգնեն խնդրի լուծման հնարավոր ուղիներ գտնել:

³ <https://www.un.org/press/en/2010/ga10967.doc.htm>

Եզրակացություն

Հետազոտությունը պարզեց, որ Զրառատում մարդիկ ջրի խնդիրն ունեն արդեն տասը տարուց ավելի: Գյուղացիները հիմնականում վատատեսական ու անհույս են նայում խնդրի կարգավորմանը: Տասը բնակչի հետ զրույցից պարզ դարձավ, որ համայնքում խնդիրը համընդհանուր է, վերաբերում է բոլորին, ու բոլորն են տուժում ստեղծված իրավիճակից, որի պայմաններում անհնարին է դարձել գյուղատնտեսական նշանակության հողի մշակումը: Փաստացի, խախտվում է տեղացիների՝ որպես ՀՀ քաղաքացի ունեցած կայուն զարգացման, բնական ռեսուրսներից օգտվելու իրավունքը: Արդյունքում՝ շատերը բռնում են երկրից հեռանալու և այլ վայրում ապրուստի միջոց փնտրելու ճանապարհը: Եթե կառավարությունն անտեսի այս խնդիրը, հետևանքներն աղետալի կլինեն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- A/RES/64/292: The Human Right to Water and Sanitation. <https://ru.scribd.com/document/38690215/A-RES-64-292-The-Human-Right-to-Water-and-Sanitation>
- Ecolur. “The fisheries remain a great problem for the Ararat Valley”. December 14, 2016. <https://www.ecolur.org/hy/news/water/--/8754/>
- Ecolur. “The problem of overusing of the water resources in the Ararat Valley remains unsolved”. <https://www.ecolur.org/hy/news/water/--/9789/>
- The regional development program 2018 of the Republic of Armenia for Armavir marz. <http://armavir.mtad.am/files/docs/32175.pdf>
- United Nations. GA/10967 28 JULY 2010. <https://www.un.org/press/en/2010/ga10967.doc.htm>
- Water Code of the Republic of Armenia (Adopted by the National Assembly of the Republic of Armenia on June 4th, 2002). http://www.parliament.am/law_docs/290602HO373eng.pdf